# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն,Արարատի մարզ,
Հնաբերդ համայնք, Գ.Լուսավորիչ փող. 3
Հեռ. 098025050,hnaberd.ararat@mta.gov.am

№ 115
10 դեկտեմբերի 2020թ.

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ Գ.ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Կից ներկայացվում է Արարատի մարզի Հնաբերդ համայնքի ավագանու 2020թվականի թիվ 34,35,36,37-Ն որոշումների կրկնօրինակները:
Առդիր՝ 12 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Հովհաննիսյան*
*Հեռ. 041737302 /*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
Հեռ.098025050, hnaberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 դեկտեմբերի 2020 թվականի N 34

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հնաբերդ համայնքի ավագանու 2020 թվականի թիվ 13 հերթական նիստի օրակարգը.

1. 2021 թվականի համար Հնաբերդ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:
2. 2021 թվականի համար Հնաբերդի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
3. 2021 թվականի համար Հնաբերդ համայնքի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԻԿ

ԹԱՎՐԵՋՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ

ԽԵՉՈՒՄՅԱՆ ՄԱՐԿՈՍ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵԴԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐԼԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
Հեռ. 098025050, hnaberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 դեկտեմբերի 2020թվականի N 35

## 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի11-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի և 37-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1/2021 թվականի հունվարի 1-ից Հնաբերդ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել 190 000 դրամ:
2/Ուժը կորցրած ճանաչել Հնաբերդ համայնքի ավագանու 2019 թվականի թիվ 30 որոշումը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԻԿ

ԹԱՎՐԵԶՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ

ԽԵՉՈՒՄՅԱՆ ՄԱՐԿՈՍ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵԴԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՍ Պ ՊՈՂՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
## ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
Հեռ. 098025050, hnaberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 դեկտեմբերի 2020թվականի N 36

### 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀՆԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 28-րդ մասի ,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի և 37-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1/2021 թվականի հունվարի 1-ից հաստատել Հնաբերդի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն կից հավելվածի.

2/Ուժը կորցրած ճանաչել Հնաբերդ համայնքի ավագանու 2019 թվականի թիվ 31 որոշումը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԻԿ

ԹԱՎՐԵԶՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ

ԽԵՉՈՒՄՅԱՆ ՄԱՐԿՈՍ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵԴԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

## ՀՀ Արարատի մարզի Հնաբերդի համայնքապետարանի 2021թ. աշխատակազմի աշխատողների աշխատանքի վարձատրության դրույքաչափերի մասին

| N | Պաշտոնի անվանումը | Հաստիքի քանակը | Ամսական աշխատավ. գումարը | տարեկան աշխատավ. գումարը | ծանո-թություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 190 000 | 2 280 000 | |
| 2 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար 1.2.1 | 1 | 155 000 | 1 860 000 | |
| 3 | Աշխատակազմի առաջատար մասնագետ 3.1.1 | 1 | 139 500 | 1 674 000 | |
| 4 | Հարկահավաք-գանձապահ | 1 | 90 000 | 1 080 000 | |
| 5 | Օպերատոր | 1 | 93 000 | 1 116 000 | |
| 6 | Պահակ | 1 | 90 000 | 1 080 000 | |
| 7 | Հավաքարար | 1 | 93 000 | 1 116 000 | |
| | | | | | |
| | Ընդամենը | 7 | 850 500 | 10 206 000 | |
| | | | | | |

Համայնքի ղեկավար` Մ. Պողոսյան

Գլխավոր հաշվապահ` Հ. Ղազարյան

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

## ՀՀ Արարատի մարզի Հնաբերդ համայնքի Մշակույթի տան 2021թ. աշխատակազմի աշխատողների աշխատանքի վարձատրության դրույքաչափերի մասին

| N | Պաշտոնի անվանումը | Հաստիքի քանակը | Ամսական աշխատավ. գումարը | տարեկան աշխատավ. գումարը | ծանո-թություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ակումբավար | 1 | 90 000 | 1 080 000 | |
| | Գրադարանավար | 1 | 93 000 | 1 116 000 | |
| | | | | | |
| | Ընդամենը | 2 | 183 000 | 2 196 000 | |
| | | | | | |
| | | | | | |

Համայնքի ղեկավար՝ Մ. Պողոսյան

Գլխավոր հաշվապահ՝ Հ. Ղազարյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
## ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հնաբերդ համայնք
Հեռ. 098025050, էլ.հասցե hnaberd.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 դեկտեմբերի 2020 թվականի N 37-Ն

## 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 18-րդ մասի, <<Տեղական տուրքերի և վճարների>> մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ,10-րդ,11-րդ,12-րդ,13-րդ,14-րդ հոդվածների և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով,համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հնաբերդ համայնքում 2021 թվականի համար սահմանել
1/տեղական տուրքերի տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի,
2/տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի,
2. Ուժը կորցրած ճանաչել Հնաբերդ համայնքի ավագանու 2019 թվականի թիվ 27-Ն որոշումը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՕՖԻԿ

ԹԱՎՐԵԶՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ

ԽԵՉՈՒՄՅԱՆ ՄԱՐԿՈՍ

ՄԻՆԱՍՅԱՆ ՍԵԴԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐԱՏ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Արարատի մարզի Հնաբերդ համայնքի
ավագանու 2020թվականի դեկտեմբերի 3-ի
թիվ 37-Ն որոշման

ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

| Հ/Հ | Տեղական տուրքերի անվանումը | Ավագանու կողմից սահմանված դրույքաչափ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1. | Հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ | |
| | **Հիմնական օբյեկտների համար՝**<br>1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար | 7 500 |
| | 2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 15 000 |
| | բ. 501 –ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 50 000 |
| | գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 25 000 |
| | դ. 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 50 000 |
| | **Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝**<br>3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 1 500 |
| | 4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 2 500 |
| 2. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | |
| | 1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն | 1 500 |

| | | |
|---|---|---|
| | 2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով. | |
| | 3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը | |
| 3. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար | 2 500 |
| 4. | Համայնքի տարածքում՝<br>1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվություն՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | |
| | Մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 7 500 |
| | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 9 750 |
| | 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 15 000 |
| | 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 18 750 |
| | 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 33 750 |
| | 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 75 000 |
| | 2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ յուրաքանչյուր եռամսյակի համար | |
| | Մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 7 500 |
| | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 9 750 |
| | 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 15 000 |
| | 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 18 750 |

| | | |
|---|---|---|
| | 201-ին մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 33 750 |
| | 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում | 75 000 |
| 5. | Համայնքի տարածքում՝<br>1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվություն՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 1 քառակուսի մետրի համար | 263 |
| | 2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն՝ ընթացիկ տարվա համար | 45 000 |
| | 3) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն՝ յուրաքանչյուր եռամսյակի համար, հիմնական շինությունների ներսում | |
| | ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 3 750 |
| | բ. 26-ին մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 7 500 |
| | գ. 51-ին մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 11 250 |
| | դ. 101-ին մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 15 000 |
| | ե. 201-ին մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 22 500 |
| | զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 37 500 |
| | 4) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն՝ յուրաքանչյուր եռամսյակի համար, ոչ հիմնական շինությունների ներսում | |
| | ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 750 |
| | բ. 26-ին մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 1 500 |
| | գ. 51-ին մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 3 000 |
| | դ. 101-ին մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 6 000 |
| | ե. 201-ին մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 11 250 |
| | զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար | 18 750 |

| | | |
|---|---|---|
| 6. | Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվություն՝ ընթացիկ տարվա համար | 37 500 |
| 7. | Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24⁰⁰-ից հետո աշխատելու թույլտվություն՝ ընթացիկ տարվա համար | |
| | 1) առևտրի օբյեկտների համար | 37 500 |
| | 2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար | 75 000 |
| | 3) բաղնիքների( սաունաների) համար | 375 000 |
| | 4) շահումներով խաղերի կազմակերպման համար | 375 000 |
| | 5) վիճակախաղերի կազմակերպման համար | 112 500 |
| 8. | Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն՝ մեկ քառակուսի մետրի համար՝ | |
| | 1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 1 500 |
| | 2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք-գովազդող արտաքին գովազդի համար | 2 625 |
| | 3) այլ արտաքին գովազդի համար | 1 125 |
| | 4/սոցիալական գովազդի համար | 0 |
| 8.1 | Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի համար /1.5*25%=0.375/: | 282 |
| | Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան /1.5*10%=0.150/: | 113 |
| 9. | Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվություն՝ ընթացիկ տարվա համար : | 7 500 |
| 10 | Համայնքի տարածքում ճանապարհների հիմնանորոգման շինարարության թույլտվություն տրամադրելու համար տեղական տուրք | |
| 10.1 | մինչև 1 000 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող ճանապարհների համար | 30 000 |
| 10.2 | 1001-3000 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող ճանապարհների համար | 45 000 |
| 10.3 | 3001 և ավելի քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող ճանապարհների համար | 60 000 |

| | | |
|---|---|---|
| | | |
| 11 | Հնաբերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող <<Հայաստանի պատմական մայրաքաղաք Դվինի>> տարածքում շինարարական աշխատանքներ իրականացնելու համար տեղական տուրք | |
| 11.1 | 1/մինչև 500 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող տարածքի համար | 15 000 |
| 11.2 | 2/501-ից 1000 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող տարածքի համար՝ | 25 000 |
| 11.3 | 3/1001-ից մինչև 3 000 քառ. մետր ընդհանուր մակերես ունեցող տարածքի համար՝ | 30 000 |
| 11.4 | 2/3001 քառ. մետր և ավելի ընդհանուր մակերես ունեցող տարածքի համար՝ | 50 000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 2
Արարատի մարզի Հնաբերդ համայնքի
ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 3-ի
թիվ 37-Ն որոշման

# ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

| Հ/Հ | Տեղական վճարների անվանումը | Ավագանու կողմից սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1. | Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | 1 000 |
| 2. | Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | 1 000 |
| 3. | Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար | 1 000 |
| 4. | Աղբահանության և կենցաղային աղբը հեռացնելու համար վճար՝ | |
| 4.1 | համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսեկան | 80 |
| 4.2 | Համայնքում գործող իրավաբանակն անձանց համար | |
| 4.2.1 | Առևտրի,հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ՝ամսեկան /1 քառ.մ./ | 35 |
| 4.2.2 | Հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ՝ ամսեկան /1 քառ. մ./ | 15 |
| 4.2.3 | Արտադրական,արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ՝ ամսեկան /1 քռ. մ./ | 4 |
| 4.2.4 | Կրթական,մշակութային,առողջապահական,սպորտային,գիտահետազոտական շինություններ՝ ամսեկան /1 քառ. մ./ | 2 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ